ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 121-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության 2024 թվականի հունիսի 12–ի գրությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի ղեկավարի 2018թվականի փետրվարի 9-ի «Գորիս համայնքի Ներքին Խնձորեսկ գյուղում գտնվող 0,09894հա սահմանազատված հողամասի, բնակելի տան նկատմամբ Նորիկ Ղուլյանի գույքային իրավունքները վերականգնելու և նրա սեփականությունը համարելու, բնակելի տանը հասցե տրամադրելու մասին» N 53-Ա որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ (այդ թվում՝ ածանցյալ պահանջներ) ՀՀ վարչական դատարան հայց ներկայացնելու ՀՀ գլխավոր դատախազության առաջարկությանը:
2. Լիազորել փաստաբան Արթուր Քյարունցին (ն.ք. 010966422, տրված 26.09.2019թ. 032-ից, փաստաբանական գործունեության արտոնագիր N 1260)՝ ՀՀ վարչական դատարանում իրականացնելու հայցվորին վերապահված լիազորությունները:
3. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ
ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ
ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄՀԵՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ
ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ
ՀԱԿՈԲՅԱՆ ՄԱՐԻՆԵ
ԱՌՈՒՇԱՆՅԱՆ ԱՌՈՒՇ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵՆՈՒԱ
ՄԱՇՈՒՐՅԱՆ ԴԱՎԻԹ
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ
ՍՈՆՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ
ՏՈՌՈՋՅԱՆ ԱՐՏԱԿ
ՏՈՌՈՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
ՕՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2024թ. հունիսի 27
ք. Գորիս